

Ներածություն

Հովհաննես Շիրազի անունը վաղուց է դրվել հայկական պոեզիայի հիշարժան անունների կողքին, վաղուց արդեն նա շրջապատված էր համաժողովրդական սիրով ու լույսերով:

Շիրազն իր ողջ պոեզիայով խաղաղության, բարության, միաբանության կոչով էր դիմում մարդկանց ու նաև ողջ մարդկությանը: Սովորաբար նրան ընկալում ենք մորը գովերգող, Մասիսը նկարագրող բանաստեղծ: Սակայն ավելի արմատական ու խորքային է նրա ստանձնած նվիրական առաքելությունը. նա մեր ազգին քարոզում էր վերադառնալ դեպի մայր բնություն, ավելի ազգայինը և մեր օրրանի ակունքները:

Շիրազի թախծի, տխրության ու վրեժի աղբյուրն այլ ակունքից է բխում, հայի ճակատագրից է ծնվում: Այսօր էլ նրա բանաստեղծությունների թեմատիկան արդիական է, մտահոգիչ ու տանջող, քանի որ դեռ չեն լուծվել համայն հայության առջև ծառայած պատմական խնդիրները: Վստահաբար կարող ենք ասել, որ Շիրազ բանաստեղծը ծնվեց իր ժողովրդի տառապանքից ու հույսերից, հալածանքից ու տանջանքների ցավից: Եվ այս ամենի սթափ գիտակցումով անհնար է չգարմանալ, թե որքան կյանք ու արև տարածեց իր շուրջը, որքան՝ քնքշանք ու բարություն:

Համառորեն չհանդուրժելով շատ երևույթներ և իրողություններ՝ նա կարողացավ դուրս գալ ծանր իրականությունից: Միրահարված կյանքին ու մարդուն՝ նրա վիրավոր հոգում ինչպե՞ս ծլարձակեցին, հարուստ բերք տվեցին բարության, սիրո ազնիվ սերմերը, նրա հոգեկան աշխարհի գաղտնարաններում ե՞րբ և ի՞նչ հրաշքով արթնացան բանաստեղծության շիրազյան բույլերը:

Մեր աշխատության մեջ փորձել ենք դիտարկել Հովհաննես Շիրազի երեք բանաստեղծությունների¹ «Հայ ժողովրդի երգը», «Թագադրում», «Էքսպրոմտ», բառապաշարի առանձնահատկությունները և ուսուցման մեթոդները

¹Հ. Շիրազ, Երկեր, Հ1, Ե., 1981, էջ 216, 25, 105:

Գլուխ 1

Բանաստեղծությունների բառապաշարի կազմությունն ու իմաստային առանձնահատկությունները

Շիրազյան բառապաշարում գործածված բառերը բազմաշերտ են՝ գրական-գեղարվեստականից մինչև ժողովրդախոսակցական: Սակայն դրանք այնքան նրբանկատորեն ու զգուշորեն են գործածված, որ իսկապես հետաքրքրության առարկա են դարձել:

«Թագադրում» բանաստեղծության վերնագիրը հենց յուրահատուկ է: Այն հոդակապավոր բարդություն է՝ կազմված է **թագ** գոյականին+**դիր** բայը (թագ+դիր+ել[վերջավորություն]):Թագը գլխին դնելու գործողությամբ հասկանում ենք մի բան՝ թագադրել: Հաճախ հանդիպում է նաև թագադրվել ձևը: Շիրազն այն գործածել է որպես գոյական՝ թագադրում: Նշենք, որ Հ.Աճառյանի «Հայերենի արմատական բառարան»-ում **թագադրում** ձևը չի նշվում, կարդում ենք թագիլ ձևը, որը բացատրվում է՝ թագ ստանալ, թագավոր պսակվել, որի հիմքը պարսկերեն թակ, թագն է²:Թագ արմատով են կազմված թագագործ, թագագլուխ, թագադրամ, թագադրյալ, թագադրություն, թագագարդ, թագադրում,թագակիր,թագավոր և այլն:

«Թագադրում» բանաստեղծությունում գործածված բառերը հիմնականում պարզ են՝ բույր, հարավ, ծիծեռնակ, ձյուն, զեփյուռ, դրախտ, արև, թագ, դաշտ և այլն:

Բարդ բառերից են արևանխտ (արև+ա+նխտ), համբույր(համ+բույր),ձնծաղիկ(ձյուն+ծաղիկ)

«Էքսպրոմտ»-ում գործածված հոդմեր, լեռներ պարզ բառերը կրկնվում են: **Վայրագ** բառը կազմված է վայր արմատից, որը, ըստ Հ. Աճառյանի, նշանակում է բիրտ, վիրագ, վայրենի³: Ի դեպ՝ **վայրագ** բառը Աճառյանը բացատրել է հետևյալ կերպ՝ *«անբնակ տեղեր ազանող, բացթեւագ»*⁴:

Շիրազի ստեղծագործությունների ընդհանուր բառապաշարը դիտարկելիս պետք է նշենք, որ նա կազմում է ածանցավոր նոր բառեր, որոնք բնութագրում են բանաստեղծի լեզվամտածողությունը և խոսքի ոճավորման ինքնատիպությունը: Նա ստեղծում է տիպիկ և անփոխարինելի մի պատկեր՝ կիրառելով այնպիսի բառեր, որոնք իրենց ձևով ու բովանդակությամբ խիստ ներդաշնակ են:

²Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե, Հ Բ, 1973, էջ 135-137:

³Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ 4,Ե,1926, էջ 300:

⁴ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ 4,Ե,1979, էջ 300:

Պոետի յուրօրինակությունը կայանում է նրանում, որ նա գործածել է լեզվական մի նուրբ հնարք. գոյականը դարձրել է բայ՝ կիրառելով կրավորական Վ ածանցը: Օրինակ՝ հրաբուխվել /հրաբուխավել/, թագվել /թագավել/, անդրանիկվել /անդրանիկավել/, ակունքվել /ակունքավել/, դերգորվել /դերգորավել/, դժոխքվել /դժոխքավել/, գորքվել /գորքավել/, կոմիտասավել/կոմիտասավել/, հեթանոսվել /հեթանոսավել/ և այլն: Ի դեպ՝ նկատելի է նաև այն, որ Շիրազը նման հնարք է կիրառել ոչ միայն գոյականների դեպքում, այլև ածականների՝ ստեղծելով ածականակերտ բայեր: Օրինակ՝ անճարվել /անճարավել/, վայրագվել /վայրագավել/: Ածանցավոր այս բայերը ևս բնորոշ են միայն շիրազյան ոճին և դարձյալ դիպվածային բառեր են: Ածանցավոր բառերի շարքում կան այնպիսի բառեր, որոնք բանաստեղծը գործածել է՝ խոսքն առավել պատկերավոր դարձնելու նպատակով: Շիրազի պոեմներում հանդիպում են տարբեր ածանցներով կազմված նորաբանություններ, որոնք և՛ նախաձանցավոր են, և՛ վերջաձանցավոր: Օրինակ՝ աստվածաբար /աստված+ա+բար/, ազգավոր /ազգ+ավոր/, անսպեղան /ան+սպեղանի/, անգթալ /ան+գթալ/, անհանգել/ան+հանգել/, անկիսելի /ան+կիսելի/, գերանգութ /գեր+անգութ/, դժոխունի /դժոխ+ունի/, եղծանի /եղծ+անի/, ընկրկանք /ընկրկ(ել)+անք/, համասպանդ /համ+ա+սպանդ/, հյուսիսուհի /հյուսիս+ուհի/, ոճրաբար /ոճիր+աբար/, պատժանք /պատիժ+անք/, պեղանք /պեղ(ել)+անք և այլն:

Շիրազյան նորաբանությունները հիմնականում երկբաղադրիչ բարդություններ են: Օրինակ՝ նորափետուր /նոր+ա+փետուր/, նորակերտ /նոր+ա+կերտ/(ի դեպ՝ գերակշռում են նոր ածականով կազմվածները), աքիլլեսավրեժ /աքիլլես+ա+վրեժ/, աստղանեկտար /աստղ+ա+նեկտար/, խենթակուրծք /խենթ+ա+կուրծք/ :

«Հայ ժողովրդի երգը» բանաստեղծության մեջ Շիրազը գործածել է ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ բառեր՝ **ճամփա**, **ճակտիս** (ճակատ), **ջահել** բառերը:

Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,

Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,

Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն...⁵

⁵Չ. Շիրազ, Երկեր, Հ1, Ե., 1981, էջ 25:

Վերլուծելով հիշատակված բանաստեղծությունների բառապաշարը՝ կարող ենք արձանագրել, որ դրանցում պոետը գործածել է շատ դիպուկ ու պատկերավոր բառեր, որոնք շատ գեղեցիկ են նկարագրում գարնանային բնության հրաշալիքները: Բառեր, որոնք նկարագրում են մի ողջ ժողովրդի հոգեվիճակը, անցած ճանապարհը, մարտական ոգին ու անկոտրում կամքը: Մխաված չենք լինի, եթե պնդենք, որ բանաստեղծությունների լեզուն պարզ է ու մատչելի, ուստի դրանք հասու են հասարակության լայն շերտերին, շիրագյան տողերն այսօր էլ արդիական են ու հոգեհարազատ յուրաքանչյուր հայի սրտին:

Գլուխ 2

<<Հայ ժողովրդի երգը>>,<<Էքսպրոմտ>>,<<Թագադրում>> բանաստեղծությունների ուսուցումը

Դասավանդման ընթացքում նշված բանաստեղծությունները ուսումնասիրելիս կկիրառենք Մտագրոհի,Վենի դիագրամի,Հասկացությունների աղյուսակի մեթոդները:

Այս բանաստեղծություններն ուսուցանելիս կկարևորենք գործածված բառերի կազմությունը, կառուցվածքը, կդիտարկենք նաև նախադասությունների տեսակները (գծապակերներ կազմելով): Կհասկանանք, թե՛ ինչու է բանաստեղծն ընտրել հենց տվյալ բառը՝ հասկանալով տվյալ միջավայրը: Այսինքն՝ բառերը կդիտարկենք թե՛ կազմությամբ, թե՛ իմաստային տեսանկյունից, կվերլուծենք թե՛ շարահյուսորեն և թե՛ ձևաբանորեն: Որպես չափածո խոսք՝ կկարևորենք խոսքի պատկերավորման միջոցները, որոնք մեզ հետաքրքրող տողերում շատ են:

Առավել մանրամասնելով՝ նշենք, որ դասավանդման ընթացքում աշակերտներին կբաժանեմ 3 խմբի և յուրաքանչյուր խմբին կհանձնարարեմ նշված բանաստեղծություններից մեկը: Աշակերտներին կհանձնարարեմ դուրս գրել պարզ, բարդ, ածանցավոր, բարդաձանցավոր բառերը և բացատրել դրանց կազմությունը: Ապա կհանձնարարեմ կազմել հասկացությունների աղյուսակ: Կհանձնարարեմ բանաստեղծությունների նախադասությունները ենթարկել ձևաբանական ու շարահյուսական վերլուծության:

Դասը սկսելիս իմ առջև կունենամ հետևյալ նպատակները՝

ա/ ներկայացնել Հ. Շիրազ բանաստեղծին

բ/ խոսել շիրազյան քնարերգության առանձնահատկությունների մասին

գ/ պարզաբանել այս երեք բանաստեղծությունների լեզվառճական և իմաստային նրբերանգները:

Դասընթացի վերջում աշակերտները կիմանան՝

Հովհաննես Շիրազը մոտ քառասուն գրքի հեղինակ է: Նրա հարուստ բառապաշարը և զգացմունքային ոճը՝ հարստացված ժողովրդական և բարբառային տարրերով, նրա պոեզիան դարձրին հայ գրականության լավագույն, մնայուն նմուշներից:

Շիրազի բանաստեղծություններում քանակական իմաստով գերակշռում են հատկապես ածականները՝ **ջահել, խիստ, արևանիստ**, ինչը չենք կարող ասել թվականների մասին:

Թեև գրողները այնքան էլ հաճախ չեն դիմում դերանվան միջոցով ոճավորված կառույցներին, բայց դերանունը ևս ոճական որոշակի լիցքեր է պարունակում, և նրա ընձեռած հնարավորություններից հմտորեն օգտվելու դեպքում ծնվում են գեղարվեստական խոսքի գլուխգործոցներ: Վերջինս վերաբերում է հատկապես «Էքսայրոմտ» բանաստեղծությանը:

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես կկորչիք վայրագ⁶:

Թեպետ մյուս չթեքվող խոսքի մասերի պես մակբայը ևս ոճական առումով այնքան էլ ակտիվ չէ, այնուամենայնիվ գրողներից շատերին էլ հաջողվել է վարպետորեն օգտվել նաև այս խոսքի մասի ոճական հնարավորությունից: Մակբայը կարող է բավականին ակտիվ դեր ունենալ փոխաբերությունների, համեմատությունների և այլ արտահայտչամիջոցների ստեղծման գործում: Այստեղ ավելացնենք, որ վերը նշված բանաստեղծություններում գործածվել են նաև մակբայներ՝ հատկապես ժամանակի՝ **հավերժ, այնժամ, դեռ**⁷:

Շատ քիչ, բայց գործածվել են նաև դերբայներ՝ ելնելու (ելնել), նայող (նայել): Իսկ ամենագործածական ու կարևոր խոսքի մասը բայն է, որը հատկապես ոճական մեծ արժեք է ձեռք բերում, երբ գործածվում է փոխաբերաբար՝ նպաստելով պատկերավորման տարբեր միջոցների ձևավորմանը: Խոսքի ոճավորման հաջողված ձևերից են այս դերբայների՝ ածականի հետ հոմանիշային և հականիշային զույգեր կազմելը և փոխանվանաբար գործածելիս գոյականին

⁶Նույն տեղում, էջ 105:

⁷Նույն տեղում, էջ 216:

բնորոշ ոճական գործառույթները, օրինակ շատ գեղեցիկ փոխաբերություն է՝ **Հագնեմ ծիրանին արշալույսների**, որտեղ գործածված բայը՝ **հագնել**, իմաստային առումով շատ դիպուկ է ցույց տալիս արշալույսները սեփական մարմնի վրա կրելու պոետի ցանկությունը:

Չյունն էլ արևի ջահել համբույրից

Ուրախ լալիս է դաշտերի վրա⁸:

Աչքերիս մեջ գարնան օրեր...⁹

Գարուն բառն այստեղ ոչ թե տարվա եղանակ է նշվում, այլ զարթոնքի, արթնացումի, ջերմության, այսինքն՝ բոլոր այն հատկանիշները, որոնք բնորոշ են կամ ունի գարունը:

Բնձ էլնելու սարեր կան դեռ,

Քարեր, սարեր, դարեր կան դեռ...¹⁰

Այս տողերում **սարերը, քարերը, դարերը** պարզ բառերը գործածվել են երկրորդական իմաստով: Բանաստեղծը մի դեպքում ցույց է տալիս վեր բարձրանալու դժվարությունները՝ քարերին վերագրելով առաջ ընթանալուն խոչընդոտող տարրեր, սարերը որպես բարձրության չափման միավոր, իսկ դարերը՝ ժամանակի միավոր:

«Հայ ժողովրդի երգը» բանաստեղծության մեջ **ելնում եմ** (ելնել) ձևը ոչ ուղիղ իմաստով է կիրառված, այսինքն՝ բանաստեղծը սար կամ լեռ բարձրանալը նկատի չունի, էստեղ **ելնել**-ը նշանակում է ոտքի կանգնել, հաղթահարել, ծոված մեջքն ուղղել, դիմանալ:

Նույն տեղում կարգում ենք **աստղերն անմեռ** բառակապակցությունը: Աստղը նույնպես մի քանի իմաստ ունեցող բառ է՝ երկնային մարմին, երկրաչափական ձև: Այն հաճախ գործածվում է փոխաբերական իմաստով՝ բախտ, ճակատագիր, հոչակավոր, գործածվում է նաև աստղով՝ դուրեկան, ձևը¹¹:

Շանթն է բեկվում ճակտիս վրա...¹²

⁸ Նույն տեղում, էջ 25:

⁹ Հ.Շիրազ, Երկեր, շ 1, Ե, 1981, էջ 216:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 114:

¹² Հ.Շիրազ, Երկեր շ 1, Ե, 1981, էջ 216:

Այստեղ պոետը ճակատ բառն օգտագործել է ոչ ուղիղ իմաստով. նշված ձևակերպումը փոխաբերական իմաստ ունի: Այստեղ նախ հավաքական կերպար՝ ժողովուրդ, պետք է հասկանանք, որ որքան էլ բեկվի շանթը ժողովրդի ճակատին, միևնույն է, մենք կանգուն ենք, դիմակայում ենք, անկոտրում ենք:

*Չյունն էլ արևի ջահել համբույրից...*¹³

Այս տողում մի քանի բազմիաստ բառ ենք տեսնում. **արևի ջահել համբույր** մակդիրը ամբողջովին փոխաբերական իմաստ ունի: **Համբույրը** գուտ մոտիկ շփման իմաստով է կիրառված, իսկ նույն **ջահել** ածականը երիտասարդ լինելու, թարմության, անաղարտության, մաքրության իմաստ է տալիս:

*Հոգիս արթնացավ հարավի բույրից...*¹⁴

Այստեղ **հարավ** բառն օգտագործված է ոչ թե որպես աշխարհագրական տերմին, այլ այն ունի հարավին բնորոշ տաքության, ջերմության իմաստ:

*Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ...*¹⁵

Այս գեղեցիկ փոխաբերության մեջ **արև** պարզ, հասարակ գոյականին տրված է հենց արևին բնորոշ հատկանիշները, այսինքն՝ այն այստեղ գործածվել է երկրողական իմաստով:

*Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն...*¹⁶

Ավելացնենք, որ Շիրազը գործածել է նաև **ճամփա, ջահել** բառերը, որոնք խոսակցական ձևեր են՝ ճամփա-ճանապարհ, ջահել-երիտասարդ: Ի դեպ՝ հիշատակված բառերը հաճախ են գործածվում ոչ իրենց ուղիղ իմաստներով, դրանցով կազմվել են նաև կայուն կապակցություններ կամ դարձվածքներ՝ ճամփա բռնել, ճամփեն կտրել, ջահել -ջիվան:

«Թագադրում»-ում հանդիպող **արևանիստ** բառն աստաջին հայացքից նորակազմ է. այն չի հիշատակվում 1926թ.-ին հրատարակված Հ.Աճառյանի բառարանում¹⁷, հիշատակում է

¹³Նույն տեղում, էջ 25:

¹⁴Նույն տեղում, էջ 25:

¹⁵Նույն տեղում:

¹⁶Նույն տեղում:

¹⁷Տե՛ս Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե., Հ Ա, 1971:

Էդ.Աղայանը¹⁸, սակայն Չարենցն իր «Տաղ սիրո ձոնված ապագայի պարմանիներին» բանաստեղծության մեջ գրել է.<<**Յուրաքանչյուր վայրկյանը և՛ գյուտ է, և՛ կորուստ, և՛ դաշտ է արևանիստ**>>¹⁹:

Նշենք, որ Շիրազի երեք բանաստեղծություններում գերակշռում են հատկապես իմաստային նորաբանությունները. օրինակ՝ **գահ** (լեռների գահ) բառին տրված իմաստը կամ զարուն բառին տված իմաստը՝ զարնան թագավոր: «Էքսպրոմտ»-ում նույն լեռներին տրված **խաղաղ** հատկանիշը իմաստային նորաբանություն է կամ նույն բանաստեղծությունում թշնամուն բնութագրող **հողմեր** բառը: Նորաբանություններ են համարվում լեզվական այն իրողությունները, որոնք փոխառվում կամ ստեղծվում են լեզվի զարգացման տվյալ փուլում կենսունակ բառակազմական եղանակներով կամ էլ բառերի իմաստների փոփոխության ու զարգացման ճանապարհով՝ նոր առարկաներ, երևույթներ, հասկացություններ արտահայտելու համար, և որոնց նորաստեղծ լինելը գիտակցվում է հենց հեղինակի կամ գործածողի կողմից:

Շարունակելով վեր հանել երեք բանաստեղծություններում գործածված բառապաշարը՝ շեշտենք հատկապես պատկերավորման միջոցների առատությունը:

Մեր ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ Հովհաննես Շիրազի երեք՝ «Հայ ժողովրդի երգը», «Թագադրում», «Էքսպրոմտ» ստեղծագործություններում արտացոլված ինքնատիպ լեզվամտածողությունը, իր հոգեվիճակին բնորոշ բառուբանը, երանգավորումը, բազմաշերտ բառապաշարը, պատկերավորման միջոցներն ու հնարքները թույլ են տալիս բացահայտել նկարագրվող երևույթի էությունն ու պատկերավորությունը: Նա կարողանում է ստեղծել այնպիսի գեղագիտական խոսք, որի ամեն բառն ունի խորհուրդ: Նրա յուրաքանչյուր նախադասություն խոր զգացմունքայնությամբ ու անմիջական պոռթկումներով վեր է հանում կենսական վիճակների միասնությունը: Այս ամենին նպաստում են լեզվառճական միջոցների ու հնարքների բազմազանությունը, բազմաշերտ բառապաշարը, պատկերավորման միջոցների գործածությունը:

Բանաստեղծը «Էքսպրոմտ»-ում նկարագրում է երկու ժողովուրդներին. մեկը խաղաղ է, ինչպես լեռները, մյուսը վայրենի, վայրագ: Այս վեց տողերի մեջ ամփոփվում են երկու ժողովուրդների՝

¹⁸Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 130:

¹⁹<https://hy.wikisource.org/>

հայի և թշնամու կերպարները, որոնք հավաքական դերանունով են ներկայացվում՝ Մենք և Դուք: Այստեղ դարերի խորքից եկող հայի պայքարն է, խաղաղասեր հայ ժողովրդի պոռթկումն ու ցասումն է, հայի անկոտրում կամքն ու հայրենասիրությունն է:

Այս բանաստեղծությունն ունի յուրահատուկ տաղաչափական հանգավորում, ինչպես նաև խոսքի ոճավորման տեսանկյունից նույնպես յուրօրինակ է, քանի որ բոլոր տողերը կառուցված են պատկերավորման միջոցով՝ համեմատությամբ: Շիրազը համեմատելով երկու ժողովուրդներին՝ նրանց բնութագրում է համապատասխան ածականներով: Մի կողմում խաղաղասեր հայ ժողովուրդն է, իսկ մյուս կողմում դաժան ոսոխը: Թշնամուն բնորոշ են՝ *հողմերի պես խուժեցիք վայրագ, հողմերի պես ոռնացիք վայրագ* ձևակերպումները: Այստեղ ընտրված բայերն անգամ բնորոշ են ոսոխին՝ վայրի ու անշնորհք կերպար ունեցողներին, որոնք ներխուժում են, այլ ոչ թե մտնում, որոնք ոռնում են, ինչը բնորոշ է հենց վայրի կենդանիներին: Հատուկ է ընտրված նաև **հողմ** բառը, նա մրրիկ կամ քամի չի ասում, որոնք ավելի մեղմ են: Հողմը փոթորիկի առավել խտացված տեսակն է, վայրի տեսակն է: Մեզ՝ հայերիս, բնութագրում է որպես խաղաղասեր, լեռների պես անսասան, հաստատակամ մի ժողովրդի, որը հավերժ է իր լեռների պես: Գրողն ինքնատիպ գեղարվեստական մտածողության շնորհիվ մեծ վարպետությամբ է համադրել ընդգծված պատկերավորման միջոցները՝ համեմատելով, շնչավորելով և գեղարվեստորեն բնութագրելով դրանք: Այստեղ գործածվել է **պես** կապը՝ միմյանց միջև եղած նմանությունը, ընդհանրությունն արտահայտելու համար:

Այսպիսով՝ Հովհաննես Շիրազի բանաստեղծություններից բացառիկ մնայուն արժեք ունի «Էքսպրոմտ»-ը՝ վեցտողանի մի ամփոփիչ երգ, որով դաստիարակվել ու այսօր էլ դաստիարակվում են մեր սերունդները: Այն իր հակիրճությամբ ավելին է ասում մեր ժողովրդի տոկունության, համառության ու հավերժության մասին, քան ծավալուն շատ գործեր: Համաձայն իր կառուցվածքի՝ այն նաև պատկերավորման միջոցներից հենց համեմատությունը հասկանալու լավագույն նմուշ է:

«Հայ ժողովրդի երգը» և «Թագադրում» բանաստեղծությունների մեջ փոխաբերությունները շատ են: Այստեղ երևում են զարթոնքի ու զարնանային արթնացումներ, արևի ու ջերմության զգացողություններ, բնապատկերային կոչեր: Աշխարհում ոչ մի թագավոր այդքան գեղեցիկ չի թագադրվել, որքան բանաստեղծին գարունն է թագադրել: Գարունը խորհրդանշում է զարթոնք, ծաղկում, նոր կյանք, սկիզբ ու գեղեցկություն: Բանաստեղծության բոլոր տողերում զգում ենք

գարնան շունչը, գարնան առաջին մաքուր օդը, լսում ենք ծիծեռնակների դայլայլը, տեսնում ենք ձյունից նայող ձնծաղիկներին. շատ գեղեցիկ պատկեր է: Պակաս գեղեցիկ չէ նաև այս նկարագրությունը՝ *Հոգիս արթնացավ հարավի բույրից... Ձյունն էլ արևի ջահել համբուրից, Ուրախ լալիս է դաշտերի վրա... Ձյունից ինձ նայող աչքերն համբուրեմ... Հագնեմ ծիրանին արշալույսների, Գարնան թագավոր ինձ թագադրեմ...*

Գործածելով հայոց լեզվի հարուստ բառապաշարի գեղեցիկ փունջը՝ նա կերտել է մի բարձրարժեք բնապատկերային բանաստեղծություն, որը գարնան զարթոնքի ու կյանքը սիրելու հորդոր է պարզապես: Շիրազն ընտրել է այն բառերը, որոնք հարիր են գեղարվեստական խոսքին ու առավել խտացված են բնութագրում երևույթը կամ նրան բնորոշ հատկանիշները: Առանձնացնենք մի քանի բառեր իրենց հոմանիշներով՝ գեփյուռ-մեղմ քամի, ջահել-երիտասարդ, արշալույս-արևածագ, հրովարտակ-հրաման, ծիրանի-բոսոր, բոցագույն, բեկել-կոտրել, ցնծալ-ուրախանալ և այլն: Առաջին հայացքից թվում է, թե հիշատակված հոմանիշները նույնպես կարող էին գործածվել, սակայն, համոզված ենք, որ դրանք նույնքան խտությամբ չէին արտահայտի ասելիքը, որքան ստացվել է: Օրինակ՝ եթե հրամանն իրավական փաստաթուղթ է, որը բնորոշ է բոլոր ղեկավարներին, որը հնարավոր է անգամ չկատարել կամ շրջանցել, ապա հրովարտակն ավելի խիստ ասված ձև է, որն արձակում է թագավորը, ոչ թե իշխանավորը: Այդպիսին է նաև **բեկել** բայը. **բեկկոտրել** բայն օգտագործում ենք մեր առօրյա կենցաղում. կարող է կոտրվել ափսե՛ն կամ բաժակը, ապա **բեկել** բայն իր մեջ ներառում է ավելի խրոխտություն, խարիզմատիզմ, ցույց է տալիս իր դիմաց կանգնածի հզորությունը, քաջությունը: Հենց **ցնծալ** բայը ուրախանալ բայի խտացված տարբերակն է, որն իր մեջ լոկ ուրախություն չի պարունակում, այլ ցույց է տալիս ուրախանալու բարձրագույն աստիճանը, սաստիկ ցնծալը, ուրախությունից թռչկոտելը: Այդպիսին է նաև **բեկել** բայը, որը պարզապես կոտրել չէ, այլ՝ ծռելով, ճկելով կոտրելն է:

Առանձնացնենք իրեն գարնան թագավոր թագադրողի՝ բանաստեղծի, հրովարտակի բովանդակությունը, որը սուսկ որոշակի ժամանակի կամ իրավիճակի համար նախատեսված հրաման չէ, այլ այն երազանք է, իդձ է և ցանկություն: Ի դեպ՝ Շիրազը գործածել է **հրովարտակ** բառը, քանի որ այն առավել բնորոշ է թագավորական միջավայրի նկարագրությանը: Նույն սկզբունքով բանաստեղծը գործածել է նաև **գահ** բառը, որը նշանակում է հենց թագավորական շքեղ աթոռ: Սակայն կարծում ենք, որ այստեղ Շիրազը բառն օգտագործել է փոխաբերական իմաստով՝

բարձր տեղ, բարձունք իմաստով, և քանի որ Հայաստանն էլ հարուստ է լեռներով, ապա այստեղ **գահը լեռների**-ն ընկալվում է որպես բարձրության միավոր:

Գարնան թագավորը ցանկանում է հաղթել մահին, նա ցանկանում է, որ մարդն ապրի հավերժ, չլինի մահը: Այստեղ նշենք, որ շատ է գործածված **որ** շաղկապը: Գլխավոր նախադասությանը ստորադասվել է յոթ նախադասություն, որոնք միմյանց համադաս են, որոնցով թվարկվում են պոետի ցանկությունները: Այնքան փոխկապակցված են մարդն ու բնությունն այս տողերում, որ պոետը ցանկանում է, **որ մարդը ցնձա հավերժի բախտով**, մարդն անմահ լինի:

*Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,
Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,
Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,
Որ գարունները գան ու չգնան,
Որ հավերժանան գմբուխտ դրախտով,
Որ բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան,
Որ մարդը ցնձա հավերժի բախտով²⁰:*

Այնքան գորեղ հրովարտակ է նախանշում բանաստեղծը, որը պիտի կարողանա պահել բնության բնականոն երևույթները՝ աղբյուրները կարկաչեն, լեռները ծաղկեն, դաշտերը կանաչեն, և վերջապես՝ գարունները մշտապես լինեն: Իսկ վերջում արդեն իր մեջ խտացնում է լավատեսություն, հույս ու լույս:

<<Հայ ժողովրդի երգը>> բանաստեղծության մեջ հանդիպում ենք՝ **ջահել համբյուր, կապույտ գահը, բախտի ճամփա, ծով դաշտեր, գմբուխտ դրախտ և այլ մակդիրների, ինչը նպաստում է գեղեցիկ խոսքի ձևավորմանը:**

Ինչպես գիտենք, հայրենի երկրի ու ժողովրդի ճակատագիրը բանաստեղծի համար միշտ առաջնային է եղել: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Շիրազը տագնապով էր հետևում

²⁰Ն.Շիրազ, Երկեր, Հ 1, Ե, 1981, Էջ 25:

ծավալվող իրադարձություններին և իր քնարով ձգտում էր լավատեսություն ներշնչել հայ զինվորներին:

Շիրազի հայտնի բանաստեղծություններից է «Հայ ժողովրդի երգը», որը նախապես անվանել էր «Վերելք»: Այն երիտասարդ հոգու մաքուր զգացմունքների և անհաս բարձունքներին հասնելու ձգտող անհատի ոգեղեն երգն է: Անհատական զգացմունքների մեջ սակայն դրսևորվում են ժողովրդի ճանապարհին հանդիպող տանջանքները, խոչընդոտները՝ հաղթահարելով միշտ վեր բարձրանալու, կոտրված մեջքն ուղղելու, հավերժանալու ձգտումն ու անկոտրում կամքը: Այնքան մեծ է այս ամենը հայ ժողովրդի հոգում, որ անտեսվում են ասին ու մահը՝

Ելնում եմ ես ահերն ի վեր,

Ելնում եմ ես մահերն ի վեր...

Այնքան գեղեցիկ է սկսում բանաստեղծությունը՝ գարնան հետ եկող զարթոնք, լավատեսություն, արթնացում, հույս, ուր տանում է ժողովրդի բախտի ճանապարհը: Այնքան մեծ է լավատեսական ձգտումը, որ դարերը, քարերն ու սարերն անգամ տեսանելի չեն ու չեն կարող խանգարել *ելնելուն*: Վերջինս պետք է հասկանալ ոչ ուղիղ իմաստով. այստեղ նա ցանկանում է ի ցույց դնել հայի անկոտրում տեսակն ու վեր ելնելու անողոք կամքը: Իսկ վեր ելնելու ճանապարհը բնավ էլ հեշտ ու դյուրին չէ:

Հիշատակված երեք բանաստեղծություններում, գերակշռում են համեմատություններն ու փոխաբերությունները, որոնք գործածվում են հիմնականում գոյականների հետ:

Վերլուծելով շիրազյան տողերի բառաշերտերը՝ կարող ենք փաստել, որ պոետի հիշատակվող ստեղծագործություններում գերակշռում են խոսքի մասերից հատկապես գոյականները, հետո անձականները: Անձականների գործածումը միտված է խոսքն առավել դիպուկ, պատկերավոր ու գեղեցիկ դարձնելուն: Դրանք են՝ **խիստ, արևանիստ, վայրագ, երջանիկ, անմեռ**: Ի դեպ՝ նշենք, որ հաճախ կրկնվող գոյականներն են՝ **քարեր, սարեր, դարեր, ճամփա, մահ, բախտ** և այլն:

Եզրակացություն

Շիրազ գրողին միայն երեք բանաստեղծությունների մեջ դիտարկելը, կարծում ենք, քիչ է հասկանալու նրա ողջ բառապաշարը, ուստի կարևորում ենք բանաստեղծի ընդհանուր բառապաշարին մեր հպանցիկ անդրադարձը: Վերջինս թույլ է տալիս առավել ճիշտ հասկանալ նրա բառապաշարն իր գերզգացմունքային ու գերզգայուն շերտերով: Քննելով շիրազյան բառապաշարը՝ կարող ենք ասել, որ նա ինքնօրինակ ձեռագիր ունի նորաբանությունների ստեղծման ասպարեզում. խոսքը մասնավորապես վերաբերում է նրա պոեմներին: Հակիրճ նշենք, որ Շիրազն իր բոլոր երգերում նորաբանություններ ստեղծելիս անմիջական լեզվաբանական-բառակազմական խնդիրներ լուծելու նպատակ չի հետապնդել: Բայց մի բան որոշակի է. նա հրաշալիորեն տիրապետել է ոչ միայն չափածոյի գաղտնիքներին, այլև մեր լեզվի բառակերտման հնարավորություններին՝ բառաբարդման և ածանցման միջոցով նոր նշանակությամբ կենսունակ բառեր ստեղծելու դժվարին արվեստին: Դրանք ինքնանպատակ չեն ստեղծվել, այլ գրողի հոգնատանջ հոգու պոռթկումներն են, որոնց գործածությամբ հեղինակին հաջողվել է ընթերցողին խորհելու ու գնահատելու Շիրազ-բանաստեղծի պոեմների լեզվական արվեստը²¹:

Վ. Առաքելյանն իրավացիորեն նկատում է. *«Սովետահայ տաղանդավոր բանաստեղծ Հ. Շիրազը իր գրական գործունեության սկզբից մինչև օրս ենթակա է Իսահակյանի բանաստեղծական խոսքի բարերար ազդեցությանը»*²²: Նշենք, որ այդ ազդեցությունն առկա է ոչ միայն առանձին պատկերների նմանության մեջ, այլ ինչպես Իսահակյանը, Շիրազը ևս *«գիտե նոր բառերի արժեքը անցյալի հարաբերությունների դրսևորման միջև, հին բառերի դերն ու նշանակությունը նոր դրույթների, միջավայրի պատկերավորման մեջ»*²³:

Այսպիսով՝ գործածված բառապաշարը Շիրազի յուրատիպ մտածողության, ուրույն պատկերազգացողության արտացոլումն է: Այդ բառերը ոչ թե բանաստեղծական խոսքի զարդաքանդակներն են, այլ ստեղծված են գեղարվեստական երկի բովանդակության ներքին թելադրանքով ու մղումով, անփոխարինելի են իրենց ոճական նշանակությամբ, օգնում են արտահայտիչ, պատկերավոր ներկայացնել բանաստեղծի վերաբերմունքը՝

²¹Տես՝ Ա. Աղիլխանյան, Նորաբանությունները Շիրազի պոեմներում/ Կանթեղ, Երևան, 2002, թիվ 2, էջ 121-136:

²²Վ. Առաքելյան, Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճական առանձնահատկությունները, Ե., 1964, էջ 177:

²³ Նույն տեղում:

տեսանելի, ամբողջական դարձնելով գեղարվեստական պատկերը: Ընտրած բառերը միաժամանակ դառնում են շիրագյան մտածողության ընդգծված պատկերավորության յուրահատուկ բաղադրատարրեր:

Գեղարվեստական խոսքի կառուցման գործում կարևոր բաղադրիչ են հանդիսանում պատկերավորման միջոցները: Անվիճելի է այն, որ արտահայտիչ, պատկերավոր խոսքն անհամեմատ տպավորիչ և ուժեղ է: Այն հարստացնում է խոսքի բովանդակությունը, բարձրացնում է արդյունավետությունը, ասելիքը դարձնում առավել հետաքրքիր, ավելի ընկալելի: Շիրագի երեք բանաստեղծությունները հարուստ են թե՛ համեմատություններով, թե՛ մակդիրներով և թե՛ փոխաբերություններով: Դրանք գեղարվեստական խոսքում պատկերավորման միջոցների լավագույն օրինակներ են:

Այս երեք բանաստեղծություններն իրենց թարմությամբ ու նշանակությամբ այսօր էլ արդիական են ու հարազատ հայ մարդուն: Դրանք նաև բնությունն ու մարդուն կապող ներդաշնակ մեղեդիներ են, և ամենևին էլ պատահական չէ Վարպետի խոսքը:

Իր հարցազրույցներից մեկում Շիրագն ասում է.

- Երբ գրեցի «Մենք խաղաղ էինք մեր լեռների պես» էքսպրոմտը, մի աղջիկ ասաց՝ տավտոլոգիա է: Վշտից խմեցի: Հետո գնացի Իսահակյանի մոտ. «Վարպետ, տավտոլոգիան ի՞նչ է»: Ասաց. «Ով ասել է, ինքն է տավտոլոգիա: Այդ գրվածքդ այնքան կապրի, որքան մեր լեռները»²⁴:

²⁴Ա. Մարումյան, Հովհաննես Շիրագ, Ե., 2016, էջ 42:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հովհաննես Շիրազ, Երկեր, Հ1, Ե., 1981:
2. [Հովհաննես Շիրազ, Երկեր, Հ 4, Ե., 1986:](#)
3. Էդ.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
4. Ա.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2004:
5. Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե., 1926:
6. Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե, Հ Բ, 1973:
7. Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե, Հ 4 1979:
8. Էդ.Աղայան,Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
9. Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987:
- 10.Ա. Ադիլխանյան, Նորբառությունները Շիրազի պոեմներում/ Կանթեղ, Ե., 2002, թիվ 2:
- 11.Վ.Առաքելյան, Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճական առանձնահատկությունները, Ե., 1964:
- 12.Ա. Սարումյան, Հովհաննես Շիրազ, Ե., 2016:
- 13.<https://hy.wikisource.or>

<<Երևանի Լեռնի անվան թիվ 65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
Հերթական ատեստատավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացի հետազոտական աշխատանք

Առարկա՝ Գրականություն

Մասնակից՝ Արեգնազ Գրիգորյան

Թեմա՝ Հովհաննես Շիրազի <<Էքսպրոմտ>>,<<Հայ ժողովրդի
երգը>>,<<Թագադրում>> բանաստեղծությունների
լեզուն,ռճը,ուսուցման առանձնահատկությունները